1034. ԵԿԵՂԵՑԻ. Նախորդի մոտ, 3 տող.

ԵՍ՝ ՆԻԱՁ-
Ս ԳՐԵՑԻ
ԹՎ[ԻՆ] ՌՃ (1651):

1035. Ս. ՍԱՐԳԻՍ ՄԱՏՈՒՌ. հարավային մուտքի ճակատաքարին, 2 տող.



ՇԻՆԵՑԱՅ Ա[ՍՏՈՒԱ]ԾԻՆ...

Ծանոթ. Մատուռը գյուղի հյուսիսակողմի բարձունքի վրա է, շինված կապտակոփ քարով, նորոգված քանիցս: Կիսաշրջան բարավորը դեղնավուն քար է, անավարտ արձանագրության տառերը լավ չեն երևում, թեև գրերը պարզ ու գեղագիր են: Պարզվում է, սակայն, որ տեղացիների կողմից Ս. Սարգիս կոչվող մատուռն իրականում նվիրված է Մարիամ Աստվածածնին:

ԼՈՌԻ ԲԵՐԴ

Գտնվում է Ձորագետ և Միսխանա գետերի խառնարանի եռանկյունաձև բարձրադիր հարթակի վրա: Գետանցող կամուրջներով ապահովվել է քաղաքի ելք ու մուտքը, ճանապարհային կապը: Ինչպես արդեն նշվեց, այս բերդաքաղաքը արքունիքի նստոց է դարձրել Դավիթ Անհողինի որդին՝ Կիւրիկէ Ա: Սակայն բերդի կառուցումը տեղի է ունեցել ավելի վաղ և վերագրվում է Դավիթ Անհողինին (Բարձրաբերդցի, 142). գտնվելով առևտրական ճանապարհների վրա, քաղաքը բուռն վերելք ապրեց ԺԱ-ԺԳ դարերում՝ դառնալով Գուգարաց աշխարհի ռազմական ու վարչաքաղաքական կենտրոնը:

Ներկայումս բերդի տարածքում պահպանվել են բերդապարիսպների երկու շերտերը՝ ավելի քան հարյուր մետր երկարությամբ և ավելի քան քսան մետր բարձրությամբ,[101] բաղնիքի շենքը, ուղղանկյուն մի շենք, որը, ենթադրում են, ծառայել է իբրև եկեղեցի: Այս շինությունների վրա արձանագրություններ չեն փորագրվել. վիմական վկայագրեր կարելի է հանդիպել ինչպես ամրոցում, այնպես էլ նրա մոտ գտնվող հին գերեզմանատանը, որտեղ կան մեծ քանակությամբ խաչքարերի պատվանդաններ:

1036. ԽԱՉՔԱՐԻ ՊԱՏՎԱՆԴԱՆ. գերեզմանոցում, 5 տող.



---

[101] *Գ. Շախկյան,* Լոռի, էջ19-20:

Ի թվ[ին] հայոց :ՈՃԸ: (1209) ՓՈԽԵՑԱՆ ՅԱՇԽԱՐՀԻ ՊԱՏ-
ՈՒԱԿԱՆ ՊԱՏՐՈՆԱՅՔՆ ՁԵՆԲՈՒՏՆ ԵՒ ՁՈՒՆԴ[Ի]
[ԿՆ]: ԵՍ՝ ԿՈՐՈՒԱԾ ՅԵՏ ՄՆԱՑՍ ԽՈՑԱԴԵՂ, ԿԱՆԳՆԵՑ[Ի]
ՁՍԲ ՆՇԱՆՍ Ի ԲԱՐԷԽԱՒՍՈՒԹԻ[ՒՆ] ՆՈՑԱ, ՈՐՔ ԵՐԿ-
ՐՊԱԳԱՆԷՔ ՅԱՂԱՒԹԱՍ ՅԻՇԵՍՁԻՔ:

Ծանոթ. Ձունդիկի և Խոցադեղի անունները տարածված էին այս կողմերում: ***Պատուական պատրոնայքն*** այս դեպքում ոչ թե Ձաքարյանները, այլ Լոռի բերդի իշխանավորպաշտոնյաներն են:

1037. ԽԱՉՔԱՐԻ ՊԱՏՎԱՆԴԱՆ. երկրորդ աստիճանին, 4 տող.



ԵՍ՝ ՀԱՋԱՐԴԵՂ, ՈՐԴԻ ՄԱԹԷՈՍԻ, [Ի]Կ-
ԵՆԴԱՆՈՒԹ[ԱՆ] ՅՈՒՍՈՎՆ ՈՐ ԱՌ ՔՍ, ԿԱՆԳՆԵՑԻ Ձ-
ՍԲ ՆՇԱՆՍ Ի ԲԱՐԷԽԱՒՍՈՒԹ[ԻՒՆ] ՀՈԳՈՅ ԻՄ[Ո]: ՈՐՔ ԵՐ-
ԿԻՐՊԱԳԱՆԷՔ ՅԻՇԵՍՁԻՔ Ի ՔՍ: ԱՄԷՆ:

Ծանոթ. Առաջինի պես խաչքարը չկա: Նախորդի ժամանակակիցն է:

1038. ԽԱՉՔԱՐԻ ՊԱՏՎԱՆԴԱՆ. գյուղի արևմտյան եզրում, Մ. Պապիկյանի տան պատշգամբի հենաքար, 4 տող.

ԹՎ[ԻՍ] ՉԻԲ (1273) ԿԱ[Ն]ԿՆԵՑԱՒ ԽԱՉՍ: ԱԾ ՈՂՈՐՄԻ . . . ՈՒՔԱՆԱ
ԵՒ ՊԵՏՐՈՍԻ ԵՒ ԻՐ ՆՆՁԵՑԵԼՈՑՆ, ՈՐ Է ԱՒՐՀՆԵ[Ա]Լ ՊՏՈՒՂՍՆ
ՊԱՏՈՒԱԿԱՆ ԼՍԵԼ ՁՁԱՅՆՍՆ՝ ԲԱՆԱԼ ՁՂՐԱԽՏՆ
ԱՆՄԱՀԱԿԱՆ:

Ծանոթ. Արձանագրությունը գրված է մեծաքանակ բարդ կցագրերով, խոհափիլիսոփայական մտորում է:

1039. ՏԱՊԱՆԱՔԱՐ. նույն գերեզմանոցում, 3 տող.



ԱՅՍԷ ՀԱՆԿԻՍՏ
ԱՎԱՔ ՊԱՐՈՆ
ԻՍ

ԱՅՍ է ՀԱՆԿԻՍՏ
ԱՎԱՔ ՊԱՐՈՆ-
ԻՍ:

Ծանոթ. Կարելի է թվագրել XV-XVI դարերով:

1040. ԲԵԿՈՐ. ընկած բերդում, 5 տող.



Ի ՓՐԿՈՒ[ԹԻՒՆ]
ՈԳՈ ԻՄՈ ԵՒ ՎԱ[ՍՆ ԱՐԵՒ]-
ՇԱՏՈՒԵ[ԱՆ] ԵՂԲԱ[ՒՐ]
ԻՄՈ ԳՐԻԳ[ՈՅՐԻ ԵՒ ՈՐԴՈ[ՑՆ]
ԻՄՈ ՍԱՐԳՍԻ ԵՒ ԱՌ[ԱՔԵԼԻ]:

Հրատ. ՊԲՀ, 1969, 2, 195:

Ծանոթ. Գմբեթակիր կիսավեր այս շինությունը պեղող Ղարիբյանի ասելով՝ այն կառուցվել է 1251 թ.: Ըստ երևույթին, արձանագրություն կրող քարը տեղափոխվել է ամրոց: Դամբարանն առաջինը նկարագրել է Իս. Հարությունյանը («Լումա», 1897, գիրք I):

1041. ԱՄՐՈՑԻ մոտի գոմի պատից հանված մի քարի վրա, 1 տող.

...[Կ]ԱԶՄՈՂՍ ՅԻՇԵՑԵՔ...:

Ծանոթ. Արձանագրության սկիզբն ու վերջը չի պահպանվել, ուր եղել է նաև խաչքարի քանդակագործի անունը:

1042. ԽԱՉՔԱՐ. ստորին մասը. հանվել է գյուղի գոմի պատից և տեղափոխվել բերդ (XII դ.), 1 տող.



. . [ԶԿ]ԱԶՄՈՂՍ ՅԱԿ[ՈԲ ՅԻՇԵՑԷՔ]:

1043. ԱՄՐՈՑԻ պատի մոտ ընկած քարի վրա, 3 տող.



ԵՄ՝ ՄԵՂՈՒՑԵ[Ա]Լ ԵՒ ԱՆ[ԱՐԺԱՆ ԾՈԱՅ]
Ք՝Ի ԽԱՐԻՓՍ, ԹԻ. . . .
. . . . . .

Ծանոթ. Երրորդ տողից մնացել են միայն մի քանի տառերի վերին եզրերը, որոնցից ոչինչ չի կարդացվում: Քարաբեկորը XIII դ. ինչ-որ կառույցից:

1044. ԱՄՐՈՑԻ հյուսիսային դարպասի պատին ստորին քարաշարի մեջ, 5 տող.



. . . ՏՎԻ . . .
Ի ՅԻՇԷՑ-
ԷՔ ԵՒ
ԱԾ Զ-
ԵԶԻՇԷ

1045. ՎԵՐԻՆ ԲԵՐԴ. Ա. Ասուլյանի բակի ցանկապատի մեջ ագուցված մի քարի վրա, 2 տող.

ՆԻԱՅԼԱԿԵՐՊՄԱՆԼ . . . [ՏԱՐ]ԵՒ ԱՅԼԱԿԵՐՊՄԱՆՍ
ԽՂՃԱԿԱՆԱՆ·· . . . ԽՂՃԱ ԿԱՆԱՆ . . . .

Ծանոթ. Արձանագրության սկիզբն ու վերջը չկա և անհնար է գաղափար կազմել բովանդակության մասին: Թվում է՝ քարը խաչքարի պատվանդանի մաս է:

1046. ԽԱՉՔԱՐ. Լոռի բերդից հյուսիս, գետի ձախ ափին, Օրան-Լոռի գյուղատեղում, մակերեսին, 4 տող.



ԵՍ՝ ԹՈՒՐԱՆՍ, ԿԱՆ
Գ|Ն|ԵՑԻ ՄԲ Խ|Ա|ՉՍ
Ի Թ|ՎԻՆ| ՉԼ
Գ (1284):

Ծանոթ. Խաչքարը պարզ, առանց զարդաքանդակների քարատախտակ է Գողգոթային կանգնած գծախաչով, որի կողաթևերն ավարտվում են երեքական մատներով: Անունը կարելի է կարդալ նաև *Թորբան,* որը, սակայն, քիչ հավանական է:

1047.ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՔԱՐԱԲԵԿՈՐ. գյուղում, Ասուլյանների տան պատի մեջ, 4 տող.

ԵՍ՝ ՄԽԻԹԱՐԻՉ
ՔԱՐԳՈՐԾ ՅԱՂ
ԱՒԹՍ ՅԻՇԵՑԵՔ
Չ|Ա|ՔԱՐԻ ՏԱՒՆԻՆ:

Ծանոթ. Մխիթարիչը Գուգարքի նշանավոր խաչքարագործ վարպետներից է XIII դարում: Վերջին տողը՝ *Չաքարի տաւնին* ասել է Չաքարե մարգարեին նվիրված տոնին պետք է հիշել քարգործ վարպետին:

1048. .ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՔԱՐԱԲԵԿՈՐ. նույն տեղում, երկրորդ տողը մնում է անհասկանալի.

ԿԱՄԱՒ ԲԱ[ՐԵՐԱՐԻՆ ԱՅ]. . .
. . . . . .

1049. ՏԱՊԱՆԱՔԱՐ. Լոռի բերդի պատմական գերեզմանոցի նոր ավելացող մասում, դագաղածև, հարավային կողին, 1 տող.

[ՏՐ] ԱԾ ՈՂՈՐՄԻ ԹԱԹԻՈՍԻ ՄԱՒՐՆ ՀՈԳՈՒՆ: ԱՄԷՆ:

Ծանոթ. Հայ վիմագրերում տարածված է ծածկագրության այն ձևը, երբ չի նշվում ննջեցյալի անունը, ինչպես այս դեպքում:

1050. ԽԱՉՔԱՐԻ ԲԵԿՈՐ, գերեզմանոցում, 1 տող.

. . . ՂՈՉՆ ՅԱՅՍՄ ՏԵՂՈ

1051. ԽԱՉՔԱՐԻ ԲԵԿՈՐ, գերեզմանոցում, քիվին ելնդատառ և սրբապատկերի ձեռքի սուրբ գրքին.

ՀԱԲԱՐՉԱՒ [ԱՍՏՈՒԱԾ ԱՐԱՐԻՉ]:
ՏՐ ՅՍ:

Ծանոթ. Քիվի տակ Հիսուսի բարձրաքանդակն է՝ աջով օրհնանքի ժեստով, ձախով՝ Ավետարանը կրծքին սեղմած: Հարդարանքի ու հորինվածքի մանրամասներով, անգամ այս պարագայում հիշեցնում է Իգահատի ձորի համբարձման տեսարանով խաչքարի (1291 թ.) պատկերագրությունը:

1052. ՏԱՊԱՆԱՔԱՐ. Լոռի բերդի պատմական գերեզմանոցում, խոշոր, դագաղաձև, միակտուր խարիսխներով.

արևմտյան ճակատի շրջանակներին, սկսվում է ձախ եզրից.

ԱՆՄԱՀ ԹԱԳԱՒՈՐ ՅԱՒ/ԻՏԵՆԻ/Ց/ ՔՍ ԱԾ/
ՈՂՈՐՄԻ Ս/ԱՆ/ՈՒԷԼԻ ՇՆՀԱՎՈՐ/ ՏԻԿՆԱ, ԱՐԵՒ-
Չ/ԱՅՆԻՆ ԵՒ ԱՄԷՆԸՆԴԱ[Ն]Ե[Ա]Ց ԿԵՆԴԱ[ՆԻ]/ ԵՒ [ՄԵՌԵԼՈՑ]:

հարավային լանջին, 3 տող.

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՍԱՆՎԷ-
ԼԱ, ԱՐԵՒՉԱՅՆԻՆ:
ՆԱՒՍ: ԹՎ[ԻՆ] ՉԾ (1301):

Ծանոթ. Ամենընդանեաց պետք է հասկանալ բոլորի, ամենքի իմաստով: Այս դեպքում անիմաստ թվացող ՆԱՒՍ հարկ է բացել ՆԱՒԱՍԱՐԴ՝ նրան համարելով տապանագործ վարպետն ու գրիչը: Թվատառի տասնավորը գծագրված է ոչ հստակ, կարող է կարդացվել նաև ժ: Այս գերեզմանոցում կա նաև վրացատառ մի տապանագիր:

1053. ԽԱՉՔԱՐԻ բեկոր, վերին ձախ եզրին, 1 տող, գեղագիր.

ՍԲ ԽԱՉՍ. . .

1054. ԽԱՉԱԲԵԿՈՐ. Լոռի բերդ ամրոցից դուրս, քիվի և թիկունքի արձանագրություններից կարդացվում է հետևյալը.

. . . [ՀՈ]ԳՈՅՆ ՅԱՅՍՄ ՏԵՂ. . .
ԵՍ՝ ՄԵՂՈՒՑԵ[Ա]Լ ԵՒ ԱՆ[ԱՐԺԱՆ] . . .

1055. ԲԵԿՈՐ. Լոռի բերդում, գեղագիր.

ՂՈՐՁՆՅԱՅՍՄՏԵՂ .. [ՏԵ]ՂՈՐՁՆ ՅԱՅՍՄ ՏԵՂ ..

Ծանոթ. Ի դեպ, Լոռի բերդում կան մի քանի արձանագրությունների բեկորներ ևս, որոնք չեն վերծանվել: Ցավոք, չի ընդօրինակվել գյուղի արևմտյան եզրի տներից մեկի բակում գտնվող երեք պատվանդաններից մեկի վրա եղած ընդարձակ վավերագիրը (խաչքարերը գոյություն չունեն):

1056. ԼՈՌԻ ԲԵՐԴ. ամրոցի արևմտյան պարսպապատի հարավային կիսաբոլոր աշտարակի հյուսիսային որմածքում, կոպտատաշ խոշոր քարի վրա, 3 տող.

ԻԹՈՂԻԶԿՈՐԿՈՏԱՐՐՈՅԻՆ	.. [ՈՒ]Ի ԹՈՂԻ ԶԿՈՐԿՈՏԱՐՐՈՅԻՆ [ԵՒ ԶԱԽԱՐԱՐ]-
ԱՐՐՈՅԻՆԿԱԲԱԼՆՃԱԽԱԳՍԱՐՔ	ԱՐՐՈՅԻՆ ԿԱԲԱԼՆ ՃԱԽԱԳ ՍԱՐՔ[Ե]
ԱՉԱՅԱՆԱՅՑՆՆՈՅՆՊԷՍՈՐԶԵ	...[Խ]ԱՉԱՅԱՆԱՅՑՆ ՆՈՅՆՊԷՍ ՈՐ ԶԵ...

Հրատ. Ավագյան, ՎԱԲ, 146-147:

Ծանոթ. Այլուստ չդիտված այս եզակի բովանդակությամբ վավերագիրը կրող քարը նախնական տեղում չէ և նրա մի կտորն է խցկած պատի մեջ: Այս առթիվ Ս. Ավագյանն իրավացիորեն նկատել է. «Արձանագրությունը հավանաբար բավականին ընդարձակ է եղել, տեղավորված մի քանի քարերի վրա, որոնցից մեզ է հասել միայն մեջտեղինը»: Նա «մի կողմ թողնելով ամբողջ բնագրի վերականգնման խնդիրը, որն ինքնին շատ կարևոր է», բծախնդրորեն քննել է միայն այստեղ հանդիպող ***կորկոտարրոց*** տառակապակցությունն ու այլուր ևս դիտված ***կաբալ*** տերմինը՝ հանգելով այն եզրակացության, որ զիջվել-վերացվել է գանձվող կորկոտի (ձավար) աղունավարձը:

Կռահել կարելի է, որ.

ա) Բնակչության սննդամթերքում կարևոր տեղ է գրավել ձավարեղենը և տեղում զարգացած է եղել ընդեղենի արտադրությունը:

բ) Բնակչության կարիքները հոգալու համար ամրոցամերձ արագահոս գետերի վրա գործել են ջրաղացներ ու դանկեր՝ հատուկ վարձավճարով: Դեռևս պահպանվում են մի շարք ջրաղացներ և ջրատար առուների մնացորդները:

գ) Ներկա պարագայում խոսքը վերաբերում է ոչ թե վարձավճարի իսպառ վերացմանը (եթող), որն անհավանական է, այլ կարգավորմանն ու հսկողությանը (սուրքե)՝ կամայականությունները կանխելու համար: Իսկ այդ պարտավորությունը դրվում է արտադրական ձեռնարկության՝ ***ձավարարրոցի*** (ձավար արարողի, աղացողի) տիրոջ ***ճաւագի*** (= ճավակ, զավակ) վրա: Հստակություն կմտցվի արձանագրության ամբողջանալու դեպքում:

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ԵՆԹԱՇՐՋԱՆ

Նոյեմբերյանի շրջանը թեև ճարտարապետական հուշարձանների առատությամբ աչքի չի ընկնում և չի կարող համեմատվել ոչ հարակից Թումանյանի և ոչ էլ Իջևանի շրջանների հետ, սակայն այն, ինչ կա՝ ուշագրավ է իր ինքնատիպությամբ. ժամանա-